

բար սակայն ասոնք զանց անուած են արդի թուագիտական դասագրքերէն:

ՀԱՏՈՒՄ Գ. նուիրուած է նշանակներուն և անոնց գործածութեանց (էջ 484 - 511):

Ամբողջ գիրքը հիանալի գործ մըն է ու պատիւ կը բերէ թէ հեղինակին և թէ վեհեակոյ բազմերախտ Մխիթարեան Հայրերուն: Ընթերցողը նկատելու է որ Հ. Աղամալեանի այն մեծ գործը գրուած է ասկէ 155 և Հ. Տէրտէրեանի գործէն 67 տարի առաջ: Տողերուս գրողը մտադիր է ի մտոյ առանձին և աւելի երկար յօդուածով մը գրախօսական մը գրել այս ընտիր երկի մասին:

(2) ՀԱՄԱՌՈՑ ԹՈՒՍԱՆՈՒԹԻՒՆ, աշխարհաբար: - Հեղինակ Հ. Խաչատուր Սիւրմէլեան: - Տպ. 1788. էջ 160: Բ. Տպագրութիւն 1817, էջ 171: Այս գիրքը գրուած է իբրեւ Նախապատրաստութիւն Աղամալեանի ընդարձակ գիրքը հասկնալու համար: Հեղինակը ժամանակուան աշխարհաբար լեզուով կը բացատրէ թուագիտութեան տարրական մասերը: - չորս գործողութիւն, կոտորակներ, համեմատութիւն և յարակից նիւթեր ու անոնց առեւտրական գործածութիւնը. Բ. տպագրութեան գործին վերջ հետաքրքրական յաւելուած մ'ալ ունի թուաբանական զուարճալիքներու վրայ: Ա. տպագրութեան մէջ հեղինակը տեղ տեղ հասարակ թիւրքերէն բառեր կը գործածէ, ինչպէս, հիւ, խօլայ, հիւսպ, ամա եւն. իսկ երկրորդ տպագրութենէն վտարուած են թիւրքերէն հասարակ բառեր, միայն պահելով գիտականները, ինչպէս օրինակ՝ ձեմ, դրմա, քարսիմ, քերպի եւն: Այս գործը հրատարակուած է ասկէ 148 և Հ. Տէրտէրեանի գործէն 58 տարի առաջ:

(3) ԵՐԿՐԱՅՈՒԹԻՒՆ, գրաբար, երեք գրքերու բաժնուած, այսինքն՝ երկայնաչափութիւն, մակարդակաչափութիւն և հաստատաչափութիւն, տեսական ուսուցմամբ, և բազմաթիւ ձեւերով: - Հեղ. Հ. Սահակ Պրոնեան: - Տպ. 1794, էջ 423: Դժբախտաբար այս հազուագիտ գործը ձեռքիս տակ չունիմ, ուստի անկարող եմ աւելի մանրամասնութիւն ներկայացնել հոս:

(4) ԵՌԱՆԿԻՆԱՅՈՒԹԻՒՆ, գրաբար, երկու մասերու բաժնուած, մակարդակ և գնդային: Կ'ու-

սուցանէ տեսական և գործնական կերպերով՝ չափել լեռանց, աշտարակաց և աստղերու հեռաւորութիւնն ու բարձրութիւնը: Գործին վերջը կան նշանակներու երեք Աղիւսակներ: - Հեղինակ՝ Հ. Սահակ Պրոնեան: - Տպ. 1810, էջ 104+ Աղիւսակներ և Զեւերու Տախտակներ: Ասիկա շարունակութիւն է հեղինակին երկրաչափական գործին (տես վերեւ) ինչպէս յայտնի է յառաջաբանէն՝ ուր կ'ըսէ. «Երկրաչափութիւն... յօրինեալ էր ըստ կարգի իբրեւ նախադրուած եւ ուսնկիւնաչափութեանս»:

Առաջին 46 էջերը նուիրուած են մակարդակ եռանկիւնաչափութեան, ուր Հ. Պրոնեան լայնօրէն կը բացատրէ եռանկիւնաչափութեան գանազան սահմաններ և հանգամանքներ, կը ներկայացնէ ուղղանկիւն եռանկեանց և խոտորանկիւն եռանկեանց լուծումներ նախ առանց նշանակներու և ապա նշանակներով (էջ 11-16, 17-46):

ԳԵՂԱՆԿԱՆ ԵՌԱՆԿԻՆԱՅՈՒԹԻՒՆԸ կը սկսի 47 էջով, և կը գրաւէ գործին մնացեալ մասը: - Ընդամենը 57 էջ, ուր կը բացատրուին գանազան սահմաններ ու հանգամանքներ գնդակալ եռանկիւնաչափութեան, ինչպէս նաեւ գործին մէջ պէտք եղած գնդակալ երկրաչափութիւն: Ապա կը յաջորդեն լուծումներ ուղղանկիւն գնդակալ եռանկեանց և խոտորանկիւն գնդակալ եռանկեանց լուծումներ (էջ 57-79) խնամով լուսաբանուած աշխարհագրական և աստղագիտական հետաքրքրական օրինակներով:

Գործին վերջ կայ Յաւելուած մը, ուր հեղինակը կը բացատրէ և կը լուսաբանէ.

- 1 կարկնի համեմատութիւն,
- 2 հաւասարամասն գործադրութիւն,
- 3 եղանակ հաշուի փոխանակութեան դրամոց,
- 4 գործադրութիւն գծից լարից,
- 5 » » մակարդակաց,
- 6 » » բազմանկեանց,
- 7 » » հաստատոնց,
- 8 » » հրահալելեաց, և
- 9 Անգղիական կարկին համեմատութեան:

Տողերուս գրողը մտադիր է այս հազուագիտ գործին վրայ եւս աւելի ընդարձակ յօդուած մը գրել՝ ժամանակս երբ ներէ:

ԲՐՈՑ. Ա. ՇԱՂՈՅԵԱՆ